ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հրատարակվել է 2022 թվականի մարտին

Սույն ուղեցույցը կարևոր տեղեկատվություն է տրամադրում այն տանտերերին, ովքեր մտադիր են օգտագործել արևային էներգիա:

ՁԵՐ ՏԱՆԸ ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ ՏԵՂԱԴՐԵԼԸ ԿԱՐԵՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է:
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԻ՛ ՍՏՈՐԱԳՐԵՔ ՄԻՆՉԵՎ ՉԸՆԹԵՐՑԵՔ ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ:

Սույն ուղեցույցը պատկանում է Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովին (CPUC)՝ այն կառավարական գործակալությանը, որը կարգավորում է մասնավոր սեփականություն հանդիսացող կոմունալ ծառայությունները, ինչպիսիք են՝ Խաղաղօվկիանոսյան գազային և Էլեկտրական ընկերությունը (Pacific Gas and Electric Company (PG&E)), Հարավային Կալիֆոռնիայի Էդիսոն ընկերությունը (Southern California Edison Company (SCE)) և Սան Դիեգոյի գազային և Էլեկտրական ընկերությունը (San Diego Gas & Electric Company (SDG&E)):

PG&E, SCE, SDG &E, BVES և PacifiCorp ընկերությունների հաճախորդները պետք է նշեն անվան սկզբնատառերը և ստորագրեն սույն ուղեցույցը բնակելի արևային էներգիայի համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար: CPUC-ն այդ ընկերություններից պահանջում է հավաքել սույն ուղեցույցի՝ ձեր կողմից ստորագրված պատճենը՝ հավաստիանալու, որ դուք գիտեք ձեր իրավունքները և ունեք բավարար տեղեկատվություն որոշում կայացնելու համար: (Այս պահանջը չի տարածվում նոր տների կամ բազմաբնակարան շենքերի արևային ջերմային համակարգերի կամ արևային համակարգերի վրա:)

Ուղեցույցի հասանելիությունը

- Աուդիո ձայնագրությունը հասանելի է 855-955-1535 հեռախոսահամարով:
- Español, 中文, 한국어, Tiếng Việt, Tagalog, Հայերեն, Portuguese, և Dari տարբերակները հասանելի են 866-849-8390 հեռախոսահամարով:

Դուք պետք է հասկանաք ու նշեք անվան սկզբնատառերը աջին 4 էջերում և ստորագրեք այս Ուղեցույցի վերջում՝ բնակելի արևային էներգիայի համակարգի պայմանագիր ստորագրելուց առաջ:

Նշե՛ք անվան սկզբնատառերը այստեղ, եթե հասկացել եք այս էջը _____ (1/4)

Ինչ է այն պարունակում

Զգուշացե՛ք կեղծ պնդումներից 2

Իմացեք Ձեր իրավունքները 3

Արևային էներգիայի մատակարարներին տվեք հետևյալ նախնական հարցերը 4

ՔԱՅԼ 1.Արդյո՞ք արևային էներգիան հարմար է ինձ համար: 5

ՔԱՅԼ 2 Հասկանալ դերերը և արևային էներգիայի գործընթացը 7

ՔԱՅԼ 3. Գտնել որակավորում ունեցող արևային էներգիայի մատակարար 9

ՔԱՅԼ 4.Համեմատե՛ք ձեր ֆինանսավորման տարբերակները 12

ՔԱՅԼ 5. Տեղեկանալ էլեկտրաէներգիայի վարձի խնայողության մասին 16

ՔԱՅԼ 6. Ուշադիր կարդացե՛ք բոլոր փաստաթղթերը 19

ՔԱՅԼ 7. Ստուգե՛ք լրացուցիչ աղբյուրները 20

ՔԱՅԼ 8.«Նախքան ստորագրելը» ստուգաթերթ 22

ՔԱՅԼ 9. Ստորագրել այս ուղեցույցը 23

Զգուշացե՛ք կեղծ պնդումներից

Արևային էներգիայի մատակարարների մեծ մասը ազնիվ և արդար են:

Այնուամենայնիվ, դեռևս կան որոշ կեղծ պնդումներ, որոնցից դուք պետք է զգուշանաք: Գործ մի՛ բռնեք այն վաճառողի հետ, ով անում է հետևյալ կեղծ պնդումներից մեկը:

Կեղծ պնդում	Ճշմարտություն
Դուք կարող եք անվճար արևային էներգիա ստանալ ձեզ համար:	Արևային էներգիան հազվադեպ է անվճար լինում: Ազնիվ ընկերությունը նախապես կտեղեկացնի բոլոր ծախսերի մասին, որոնք դուք պետք է վճարեք ժամանակի ընթացքում: Կա մեկ բացառություն. կառավարության կողմից ֆինանսավորվող արևային էներգիայի մի քանի ծրագրեր առաջարկում են անվճար կամ էժան արևային էներգիա ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար: Անցե՛ք անմիջապես էջ 6՝ տեսնելու, թե կառավարության կողմից հաստատված որ կազմակերպություններն են իրականացնում նման ծրագրերը:
Արևային էներգիայի համակարգի տեղադրումից հետո դուք այլևս էլեկտրաէներգիայի հաշիվ չեք վճարի:	Արևային էներգիային անցնելուց հետո դուք սովորաբար ամեն ամիս կվճարեք էլեկտրաէներգիայի փոքր հաշիվ և էլեկտրաէներգիայի ավելի մեծ հաշիվ 12-ամսյա ցիկլի վերջում: Օրինակի համար տե՛ս էջ 17: Այն հաճախորդները, ովքեր արևային էներգիայի համար վարկ են վերցնում կամ կնքում են վարձակալության կամ էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր, նաև ամսական հաշիվ կստանան վարկային ընկերությունից կամ արևային էներգիայի մատակարարից: Եթե դուք օգտվում եք Գույքի գնահատմամբ մաքուր էներգիայի (Property Assessed Clean Energy (PACE)) ֆինանսավորումից, դուք նաև տարին մեկ կամ երկու անգամ կվճարեք ձեր գույքահարկի կամ ամսական ձեր հիփոթեքային վճարի հետ:
Ժամանակը սեղմ է, և դուք պետք է արագ ստորագրեք էլեկտրոնային պլանշետով՝ արևային էներգիա ստանալու համար:	Ազնիվ վաճառողը երբեք չի շտապեցնի ձեզ որևէ բան ստորագրել առանց ձեզ ժամանակ տալու՝ աչքի անց կացնելու այն, ինչ դուք ստորագրում եք: Կալիֆոռնիայի օրենքով վաճառողը պարտավոր է ցույց տալ պայմանագրի պայմանները նախքան ստորագրելը:

Եթե կարծում եք, որ դարձել եք արևային էներգիայի խարդախության զոհ, կարող եք բողոք ներկայացնել Կապալառուների պետական արտոնագրման խորհուրդ (CSLB) կապալառուի կամ տների բարելավման վաճառողի դեմ՝ 800-321-CSLB (2752) հեռախոսահամարով կամ cslb.ca.gov/consumers հղումով:

Ֆինանսավորող ընկերության դեմ բողոք ներկայացնելու համար այցելե՛ք dfpi.ca.gov/file-a-complaint:

Նշեք անվան սկզբնատառերը այստեղ, եթե հասկացել եք այս էջը _____ (2/4)

Իմացեք Ձեր իրավունքները

Դուք իրավունք ունեք...

կարդալ այս ամբողջ 24 էջանոց ուղեցույցը նախքան պայմանագիր կնքելը:

CPUC-ն արևային էներգիայի մատակարարներին առաջարկում է սույն ուղեցույցը տրամադրել իրենց պոտենցիալ հաճախորդների հետ առաջին շփման ընթացքում: Մի՛ զգացեք Ձեզ պարտադրված կարդալ սույն ուղեցույցը, մինչ վաճառողը սպասում է: Խնդրեք նրանց վերադառնալ ավելի ուշ, որպեսզի դուք ժամանակ ունենաք կարդալ այն:

Եթե դուք PG&E, SCE, SDG&E, BVES կամ PacifiCorp ընկերության հաճախորդ եք, արևային էներգիայի մատակարարը պետք է ձեզ ժամանակ տա կարդալու այս ուղեցույցը, նախքան արևային էներգիայի պայմանագիր ստորագրելը: Եթե նրանք Ձեզ թույլ չեն տալիս կարդալ սույն ուղեցույցը, նրանք չեն կարող Ձեր արևային էներգիայի համակարգը միացնել էլեկտրական ցանցին, և Դուք պետք է այդ մասին զեկուցեք Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդին (CSLB)՝ 800-321-CSLB (2752) հեռախոսահամարով կամ cslb.ca.gov/consumers հղումով:

արևային էներգիայի պայմանագրի և ֆինանսավորման համաձայնագրի պատճենի այն լեզվով, որով վաճառողը խոսել է ձեզ հետ:

Եթե արևային էներգիայի մատակարարը կամ վաճառողը գալիս է Ձեզ արևային էներգիայի մարտկոցներ վաճառելու և Ձեզ հետ խոսում է անգլերենից բացի այլ լեզվով, նրանք պետք է Ձեզ տրամադրեն պայմանագրի պատճենը այդ լեզվով: Բացի այդ, եթե նախընտրում եք կարդալ այս ուղեցույցը իսպաներեն, չինարեն, կորեերեն, վիետնամերեն կամ տագալերեն, ապա արևային էներգիայի մատակարարը կամ վաճառողը պետք է ձեզ այս ուղեցույցը տրամադրի այդ լեզվով:

Ձեր արևային էներգիայի մատակարարից Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթղթի:

Օրենքի համաձայն, արևային էներգիայի մատակարարը Ձեզ պետք է տրամադրի Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման ամբողջական փաստաթուղթ, որը ստեղծվել է Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդի (CSLB) կողմից: Այս մեկ էջանոց փաստաթուղթը ցույց է տալիս արևային էներգիայի համակարգի ընդհանուր ծախսերը: Այս փաստաթղթի դատարկ տարբերակը հասանելի է cslb.ca.gov/consumers/solar_smart հղումով:

պայմանագիրը ստորագրելուց հետո չեղարկման 3-օրյա ժամկետի:

Դուք ունեք առնվազն երեք աշխատանքային օր ձեր պայմանագիրը ցանկացած պատճառով չեղարկելու համար: Դուք կարող եք չեղարկել պայմանագիրը՝ էլեկտրոնային փոստով, փոստով, ֆաքսով կամ ծանուցում ուղարկելով ձեր արևային էներգիայի մատակարարին մինչև պայմանագրի ստորագրված, թվագրված պատճենը ստանալուց հետո երրորդ աշխատանքային օրվա կեսգիշերը: Նկատի ունեցեք, որ տարբեր կանոններ կարող են կիրառվել ընկերության գործունեության վայրում բանակցվող պայմանագրերի համար:

Եթե ձեր արևային էներգիայի մատակարարը հրաժարվում է չեղարկել պայմանագիրը, այդ մասին տեղեկացրեք CSLB-ին՝ 800-321-CSLB (2752) հեռախոսահամարով կամ cslb.ca.gov/consumers հղումով:

Նշեք անվան սկզբնատառերը այստեղ, եթե հասկացել եք այս էջը _____ (3/4)

Արևային էներգիայի մատակարարներին տվեք հետևյալ նախնական հարցերը

Նախքան պայմանագիր ստորագրելը

Ո՞րն է Կապալառուների պետական լիցենզային խորհրդի (CSLB) ձեր լիցենզիան կամ գրանցման համարը:

Արևային էներգիայի մատակարարից պահանջեք իր CSLB լիցենզիայի համարը: Եթե ձեզ հետ շփումը եղել է հեռախոսով կամ դռնից դուռ վաճառողի միջոցով, խնդրեք նաև նրանց՝ տան բարեկարգման վաճառողի (HIS) անհատական գրանցման համարը: Այնուհետև ստուգեք լիցենզիայի և, եթե կիրառելի է, HIS գրանցման համարները՝ համոզվելու համար, որ դրանք վավեր են և կապված են արևային էներգիայի մատակարարի հետ՝ այցելելով cslb.ca.gov/consumers կամ զանգահարելով 800-321-CSLB (2752) հեռախոսահամարին:

- CSLB լիցենզիայի համարն է՝ _____
- (Եթե կիրառելի է) HIS-ի գրանցման համարն է՝_____

CSLB լիցենզիան պետք է լինի ակտիվ և համապատասխանաբար դասակարգվի C-46 (Արևային էներգիայի կապալառու), C-10 (Էլեկտրական կապալառու) կամ B (Գլխավոր շինարարական կապալառու), որպեսզի վավեր լինի: Եթե ձեր արևային էներգիայի մատակարարը չունի կապալառուի վավեր լիցենզիա, պայմանագիր մի ստորագրեք նրանց հետ և այդ մասին տեղեկացրեք CSLB-ին:

Որքա՞ն է արևային էներգիայի համակարգի ընդհանուր արժեքը:

Եթե մտածում եք արևային էներգիայի վարկի, վարձակալության կամ էլեկտրաէներգիայի գնման պայմանագրի մասին, հարցրեք նաև.

- Կա՞ կանխավճար:
- Որքա՞ն եմ վճարելու ամսական: Ե՞րբ և որքա՞ն կավելանան այդ վճարումները:

Եթե դուք մտածում եք PACE ֆինանսավորման հնարավորության մասին, նաև հարցրեք.

- Որքա՞ն եմ վճարելու տարին մեկ կամ երկու անգամ իմ գույքահարկի կամ ամսական հիփոթեքի վճարումների հետ:
- Քանի՞ տարի եմ վճարելու այս գումարը:

Եթե ես վաճառեմ իմ տունը, որո՞նք են իմ տարբերակները և ի՞նչ պետք է անեմ:

Խնդրեք ձեր արևային էներգիայի մատակարարին, վարկատուին կամ PACE ծրագրի ադմինիստրատորին ցույց տալ ձեզ, թե պայմանագրի որ մասում է նկարագրված, թե ինչ է տեղի ունենում, երբ դուք վաճառում եք ձեր տունը:

ԼԱՎ, ես կարդացի այս 4 էջերը: Հիմա ի՞նչ պետք է անել:

- Արևային էներգիային անցնելու քայլ առ քայլ ուղեցույցի համար, անցեք հաջորդ էջ: Դա ողջունելի է, նույնիսկ եթե դուք արդեն սկսել եք արևային էներգիային անցնելու գործընթացը:
- Համոզվեք, որ առաջարկներ եք ստանում առնվազն 3 տարբեր արևային էներգիայի մատակարարներից: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս էջ 9:
- Նախքան պայմանագիր ստորագրելը այցելեք այս ուղեցույցի 10-րդ էջը արևային էներգիայի մատակարարին այլ կարևոր հարցեր տալու համար:
- Եթե դուք արդեն հասկանում եք բովանդակության աղյուսակում թվարկված տեղեկատվությունը և պատրաստվում եք պայմանագիր ստորագրել, կարող եք անցնել այս ուղեցույցի 22-րդ էջում գտնվող «Նախքան ստորագրելը» ստուգաթերթը:

Նշեք անվան սկզբնատառերը այստեղ, եթե հասկացել եք այս էջը _____ (4/4)

ՔԱՅԼ 1.
Արդյո՞ք արևային էներգիան հարմար է ինձ համար:

1

Արևային ֆոտովոլտային վահանակները կարող են կլանել արևի լույսը ձեր տանիքի կամ գույքի վրա և այն վերափոխել էլեկտրաէներգիայի: Այս էլեկտրաէներգիան սնուցում է ձեր տան կարիքները, ինչպիսիք են՝ լույսը, էլեկտրական մեքենաները և կենցաղային տեխնիկան:

Նախքան ձեր տանը արևային էներգիա ստանալու մասին մտածելը, հարցրեք ինքներդ ձեզ.

Արդյո՞ք ես իմ տունը նախ և առաջ դարձրել եմ էներգաարդյունավետ:

Էներգիայի սպառման կրճատումը կարող է նվազեցնել Ձեզ անհրաժեշտ արևային համակարգի չափը՝ պոտենցիալ խնայելով ձեր հազարավոր դոլարները: Այցելե՛ք energyupgradeca.org/home-energy-efficiency և/կամ կապվե՛ք ձեր էլեկտրաէներգիայի մատակարարի հետ էներգաարդյունավետության վերաբերյալ խորհուրդների և տան էներգիայի սպառման գնահատում ստանալու վերաբերյալ: Կարող եք նաև հարցնել ձեր էլեկտրաէներգիայի մատակարարին բնակելի տարածքներում պահանջարկի արձագանքման ծրագրերի մասին:

Արդյո՞ք ես իրավունք ունեմ մասնակցելու ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի ծրագրերին:

Եթե կարծում եք, որ կարող եք մասնակցել ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի ծրագրին, անպայման կարդացեք 6-րդ էջը: Կան բնակելի տների և համայնքային արևային էներգիայի ծրագրեր, որոնք հասանելի են ցածր եկամուտ ունեցող PG&E, SCE և SDG&E ընկերությունների հաճախորդների համար, որոնք կարող են խնայել ձեր գումարն առանց ֆինանսական ներդրման:

Արդյո՞ք իմ տանիքը հարմար է տանիքային արևային էներգիայի համար:

- Արդյո՞ք իմ տանիքը մեծ քանակությամբ արևի լույս է ստանում, թե՞ այն հիմնականում ստվերված է: Ո՞ր ուղղությամբ է նայում տանիքը: Տանիքները, որոնք հիմնականում ստվերված են կամ ուղղված են դեպի հյուսիս, արևային էներգիայի համար հարմար չեն: Եթե դուք մտադրված եք շուտով փոխել ձեր տանիքը, դուք պետք է այն փոխեք նախքան տանիքային արևային համակարգ տեղադրելը:
- Եթե ձեր տանիքը խիստ ստվերված է կամ լավ վիճակում չէ, կամ եթե վարձակալ եք, համայնքային արևային էներգիայի ծրագրերը կարող են հարմար լինել ձեզ համար: Համայնքային արևային էներգիայի միջոցով դուք ստանում եք ձեր էլեկտրաէներգիայի 50-100 տոկոսը Կալիֆոռնիայում տեղակայված արևային նախագծերից: Համայնքային արևային էներգիայի ծրագրերը տարբեր են և կարող են մեծացնել ձեր էլեկտրաէներգիայի վճարը կամ ապահովել էլեկտրաէներգիայի վարձի խնայողությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմե՛ք ձեր էլեկտրաէներգիայի մատակարարին:

Արևային էներգիայի ծրագրեր ցածր եկամուտ ունեցողների համար

Հասանելի է PG&E, SCE և SDG&E ընկերությունների հաճախորդների համար

Եթե Դուք ներկայումս ստանում եք կամ իրավասու եք ստանալ զեղչված էլեկտրաէներգիայի հաշիվ Կալիֆոռնիայի էներգիայի այլընտրանքային սակագների (CARE) կամ Ընտանեկան էլեկտրաէներգիայի սակագների օժանդակության (FERA) ծրագրի շրջանակներում, ապա դուք կարող եք դիմել ցածր գնով կամ անվճար արևային էներգիայի մարտկոցների տեղադրման օգնությանը՝ օգտագործելով աջ կողմում գտնվող ծրագրերից մեկը:

Դուք կարող եք նաև համապատասխանել այս ծրագրերից որևէ մեկին, եթե ապրում եք անբարեհաջող համայնքում (DAC): DAC-ն մի թաղամաս է, որը խոցելի է աղտոտման բազմաթիվ աղբյուրների նկատմամբ: Պարզելու համար, թե արդյոք դուք ապրում եք համապատասխան DAC-ում, ստուգե՛ք քարտեզով՝ cpuc.ca.gov/solarindacs:

Եթե դուք PG&E, SCE կամ SDG&E ընկերության հաճախորդ չեք, զանգահարե՛ք ձեր էլեկտրաէներգիայի մատակարարին կամ ստուգե՛ք իրենց կայքը՝ տեսնելու, թե արդյոք ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի որևէ տարբերակ հասանելի է ձեզ:

SASH ծրագիր և DAC-SASH ծրագիր

SASH ծրագիրը համապատասխան եկամուտ ունեցող միայնակ ընտանիքներին տրամադրում է զեղչեր տանիքային արևային էներգիայի համար: Եթե դուք համապատասխանում եք, ձեր ընտանիքը կարող է ցածր գնով արևային էներգիայի տեղադրման աջակցություն ստանալ: DAC-SASH ծրագիրը նախատեսված է CARE-ին կամ FERA-ին համապատասխանող մեկ ընտանիքով տանտերերի համար, ովքեր ապրում են DAC-ում: Եթե դուք համապատասխանում եք, ձեր ընտանիքը կարող է աջակցություն ստանալ արևային էներգիայի տեղադրման հարցում: GRID Alternatives-ը կառավարում է SASH և DAC-SASH ծրագրերը:

Տեսե՛ք՝ արդյոք դուք համապատասխանում եք՝ այցելելով gridalternatives.org/qualify կամ զանգահարելով GRID Alternatives՝ 866-921-4696 հեռախոսահամարով:

DAC-Green Tariff ծրագիր

DAC-Green Tariff ծրագիրը նախատեսված է այն իրավասու տնային տնտեսությունների համար, որոնք ապրում են DAC-ում: Մասնակիցները կարող են փոխհատուցել իրենց էլեկտրաէներգիայի 100 տոկոսը արևային էներգիայի արտադրությամբ և ստանալ 20 տոկոս զեղչ էլեկտրաէներգիայի վճարների վրա: Այս ծրագրով դուք ստիպված չեք լինի ձեր տանիքին արևային վահանակներ տեղադրել: Արևային մարտկոցները տեղադրված են այլուր, բայց վճարներն ուղղված են ձեզ:

Իրավասության և գրանցվելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս cpuc.ca.gov/solarindacs:

Community Solar Green Tariff ծրագիր

Community Solar Green Tariff ծրագիրը թույլ է տալիս անապահով համայնքների տնային տնտեսություններին բաժանորդագրվել արևային էներգիայի ագարակին՝ իրենց շրջանից 5 մղոն հեռավորության վրա և ստանալ 20 տոկոս զեղչ իրենց էլեկտրաէներգիայի վճարների համար:

Իրավասության և գրանցվելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս cpuc.ca.gov/solarindacs:

PACE ֆինանսավորումը «կառավարության անվճար ծրագիր» չէ:

Եթե որևէ մեկը նկարագրում է ձեզ այս կերպ, խնդրում ենք կարդալ կեղծ պնդումների մասին սույն ձեռնարկի 2-րդ էջում: PACE ֆինանսավորման մասին կարող եք տեղեկանալ էջ 14-ում:

ՔԱՅԼ 2.
Հասկանալ դերերը և արևային էներգիայի գործընթացը

2

Արևային էներգիայի մատակարարներ

Արևային էներգիայի մատակարարները ընկերություններ են, որոնք վաճառում են ձեզ արևային էներգիա և տեղադրողներ են ուղարկում ձեր տուն: Երբեմն նրանք տրամադրում են ֆինանսավորում: Նրանք պետք է լիցենզավորված լինեն: Տե՛ս էջ 4:

Վաճառողներ

Վաճառողներն աշխատում են արևային էներգիայի մատակարարների համար և կարող են զանգահարել ձեզ կամ թակել ձեր դուռը: Նրանք պետք է գրանցված լինեն, որոշ սահմանափակ բացառություններով: Խնդրե՛ք նրանց՝ «տան բարեկարգման վաճառողի (HIS) գրանցումը» և ստուգե՛ք այն՝ զանգահարելով 800-321-CSLB (2752) կամ cslb.ca.gov/consumers հղումով:

Տեղադրողներ

Տեղադրողներն ուղարկվում են ձեր տուն արևային էներգիայի մատակարարների կողմից՝ տանիքի, հողի և էլեկտրականության կարգավիճակը ստուգելու և արևային էներգիայի համակարգը տեղադրելու համար: Նրանք պետք է լիցենզավորված լինեն, ինչպես արևային էներգիայի մատակարարը: Տե՛ս էջ 4:

Արտադրողներ

Արտադրողներն այն ընկերություններն են, որոնք արտադրում են արևային էներգիայի սարքավորումներ: Նրանք ապահովում են արևային էներգիայի երաշխիքների մեծ մասը գնված համակարգերի համար:

Էլեկտրաէներգիայի մատակարարներ

Էլեկտրաէներգիայի մատակարարները փոխկապակցում են ձեր արևային էներգիայի համակարգը էլեկտրական ցանցին և ուղարկում են ձեզ էլեկտրաէներգիայի վճարներ, որոնք կարող են ներառել արևային էներգիայի վճարների կրեդիտներ:

Վարկատուներ

Վարկատուները ձեզ ֆինանսավորում են, եթե ունեք արևային էներգիայի վարկ:

PACE ծրագրի ադմինիստրատորներ

Բացառությամբ մի քանի կառավարական PACE ծրագրերի, PACE ֆինանսավորման ծրագրերը կառավարվում են PACE ծրագրերի ադմինիստրատորների կողմից, որոնք պետք է լիցենզավորված լինեն: Ստուգե՛ք նրանց լիցենզիան dfpi.ca.gov/pace-program-administrators կայքում:

PACE փաստաբաններ և PACE փաստաբանական գործակալներ

PACE փաստաբանները կազմակերպություններ են, ինչպիսիք են կապալառու ընկերությունները, իսկ PACE փաստաբանական գործակալները մասնավոր անձինք են, ինչպիսիք են տան բարեկարգման վաճառողները: Նրանք լիազորված են PACE ծրագրի ադմինիստրատորների կողմից՝ առաջարկելու տանտերերին PACE ֆինանսավորման համաձայնագրեր կնքել: Ստուգե՛ք նրանց գրանցումը PACE ծրագրի ադմինիստրատորի մոտ dfpi.ca.gov/pace-program-administrators հղումով:



Քաղաքային/շրջանային տեսուչներ

Քաղաքի/շրջանի տեսուչները գալիս են ձեր տուն՝ համոզվելու, որ համակարգը համապատասխանում է նորմերին՝ ապահովելու ձեր առողջությունն ու անվտանգությունը:

Տիպիկ տանիքային արևային էներգիայի գործընթացի ակնարկ

Նախքան պայմանագիր ստորագրելը

Դուք	որոշեք, թե արդյոք տանիքային արևային էներգիայի համակարգը հարմար է ձեզ համար (տե՛ս էջ 5)
Դուք	ստացեք տան էներգիայի գնահատումը, որպեսզի ձեր տունն ավելի էներգաարդյունավետ դառնա (տե՛ս էջ 5)
Դուք	ծանոթացեք ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի ծրագրերին, որպեսզի տեսնեք, թե արդյոք դուք համապատասխանում եք (տե՛ս էջ 6)
Դուք	հետազոտեք արևային էներգիայի մատակարարներին և համեմատեք առնվազն 3 առաջարկ (տե՛ս էջ 9)
Արևային էներգիայի մատակարարը	ձեզ տրամադրում է պայմանագիր և Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթուղթ (տե՛ս էջ 9)
Դուք	անհրաժեշտության դեպքում դիմում եք ֆինանսավորման համար (տե՛ս էջ 12)
Վարկատուն/ PACE ծրագրի ադմինիստրատորը	կազմում է ֆինանսավորման համաձայնագիրը (անհրաժեշտության դեպքում)
Դուք	վերանայում եք արևային էներգիայի պայմանագիրը, Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթուղթը և ցանկացած ֆինանսավորման համաձայնագիր (տե՛ս էջ 19)
Դուք	վերանայում եք սույն Արևային էներգիայի սպառողների պաշտպանության ուղեցույցի 22-րդ էջում գտնվող ստուգաթերթը
Դուք	ստորագրում եք սույն ուղեցույցը, արևային էներգիայի պայմանագիրը և ֆինանսավորման համաձայնագիրը

Սովորաբար արևային էներգիայի համակարգը ձեր տանը տեղադրվում է պայմանագիրը ստորագրելուց հետո1-ից 3 ամսվա ընթացքում:

Պայմանագիր ստորագրելուց հետո

Տեղադրողը	կատարում է տնային այց՝ ենթադրությունները հաստատելու և տանիքի, հողի և էլեկտրականության պայմանները ստուգելու համար
Արևային էներգիայի մատակարարը	ավարտում է համակարգի նախագծումը և դիմում է քաղաքային կամ շրջանային գործակալությանը շինարարության թույլտվության համար
Տեղադրողը	տեղադրում է արևային էներգիայի համակարգը (միայն քաղաքի/շրջանի թույլտվությունը ստանալուց հետո)
Քաղաքային/ շրջանային տեսուչը	անհրաժեշտության դեպքում ստուգում է համակարգի համապատասխանությունը շինարարական թույլտվությանը
Արևային էներգիայի մատակարարը	դիմում է էլեկտրաէներգիայի մատակարարին՝ արևային էներգիայի համակարգը ցանցին միացնելու համար
Արևային էներգիայի մատակարարը	էլեկտրաէներգիայի մատակարարին ներկայացնում է քաղաքի/շրջանի տեսչական ստուգման հաստատումը
Դուք	միացնում եք համակարգը միայն էլեկտրաէներգիայի մատակարարից գրավոր համաձայնություն ստանալուց հետո
Էլեկտրաէներգիայի մատակարարը	ուղարկում է ձեզ ձեր առաջին էլեկտրաէներգիայի հաշիվը արևային/զուտ էներգիայի հաշվառման հաշվարկով (տե՛ս էջ 17)
Վարկատուն/ Արևային էներգիայի մատակարարը	ուղարկում է ձեզ արևային էներգիայի համակարգի կամ արևային էներգիայի առաջին հաշիվը*

Արևային էներգիայի համակարգի տեղադրումից հետո սովորաբար 2-ից 3 շաբաթ է պահանջվում ձեր էլեկտրաէներգիայի մատակարարից թույլտվություն ստանալու համար՝ ձեր համակարգը միացնելու համար: Դա կարող է ավելի երկար տևել՝ կախված հանգամանքներից:

*Եթե օգտվում եք PACE ֆինանսավորումից, դուք հաշիվ չեք ստանա վարկատուից կամ արևային էներգիայի մատակարարից (վերջին քայլը՝ վերևում): Փոխարենը, ձեր վճարումները կկատարվեն տարին մեկ կամ երկու անգամ ձեր գույքահարկի կամ ամսական հիփոթեքային վճարումների հետ:

ՔԱՅԼ 3.
Գտնել որակավորում ունեցող արևային էներգիայի մատակարար

3

Ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի ծրագրերի համար գնացեք էջ 6:

Գտե՛ք արևային էներգիայի մատակարարներ, որոնք գործում են ձեր հարևանությամբ

Այցելե՛ք cslb.ca.gov՝ կառավարության կայք, և սեղմե՛ք «Գտնել իմ լիցենզավորված կապալառուին» որոնումը՝ էջի աջ կողմում: Մուտքագրե՛ք ձեր քաղաքը և լիցենզիայի հետևյալ դասակարգումներից որևէ մեկը՝ C-46 (Արևային էներգիայի կապալառու), C-10 (Էլեկտրական կապալառու) կամ B (Գլխավոր շինարարական կապալառու):

Այցելե՛ք californiadgstats.ca.gov՝ կառավարության կողմից ֆինանսավորվող կայք՝ մուտքագրելու ձեր փոստային կոդը և տեսնելու արևային էներգիայի մատակարարների ցանկը և տեղադրման վերջին ծախսերը: Նկատի՛ ունեցեք, որ այս ծախսերը չեն ստուգվում կառավարության կողմից:

Ստուգե՛ք՝ տեսնելու համար, թե արդյոք ձեր շրջանն ունի Շրջանի Կապալառուների Միություն՝ արտոնագրված արևային էներգիայի մատակարարներով:

Հարցրե՛ք ընկերներին և հարևաններին, ովքեր արևային էներգիա են տեղադրել առնվազն մեկ տարի առաջ, արդյոք նրանք խորհուրդ են տալիս ինչ-որ արևային էներգիայի մատակարարին և ինչու:

Կրճատե՛ք ցանկը մինչև լիցենզավորված արևային էներգիայի մատակարարներ

Նախ, համոզվե՛ք, որ արևային էներգիայի մատակարարները, որոնք դուք դիտարկում եք, ունեն վավեր լիցենզիա CSLB-ից: Արևային էներգիայի մատակարարների և դրանց տեղադրողների համար անօրինական է բիզնես վարել առանց լիցենզիայի:

- Այցելե՛ք Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդի (CSLB) կայք՝ cslb.ca.gov/consumers, կամ զանգահարեք 800-321-CSLB (2752) հեռախոսահամարով՝ տեսնելու, թե արդյոք արևային էներգիայի մատակարարի և տեղադրողի լիցենզիաներն ակտիվ են և վավեր: Լիցենզիաները պետք է դասակարգվեն C-46 (Արևային էներգիայի կապալառու), C-10 (Էլեկտրական կապալառու) կամ B (Գլխավոր շինարարական կապալառու):

Պարզե՛ք, թե որքան ժամանակ է ընկերությունը գործում և քանի տեղադրում են նրանք կատարել:

Առցանց ստուգե՛ք հաճախորդների կարծիքները վստահելի կայքերում: Քանի որ որոշ կայքեր կարող են չեզոք չլինել, ստուգե՛ք մի քանի տարբեր կայքեր՝ համոզվելու համար, որ կարծիքները համընկնում են:

Այցելե՛ք CPUC-ի՝ չհամապատասխանող արևային էներգիայի մատակարարների հանրային ցանկը, որում ցուցադրվում են կապալառուներ, որոնք խախտել են CPUC, CSLB կամ DFPI կանոնակարգերը: Այս ցանկը թարմացվում է եռամսյակը մեկ և կարելի է գտնել cpuc.ca.gov/solarpubliclist հղումով:

Դա լավ նշան է, եթե ընկերություններում աշխատում են այնպիսի տեղադրողներ, որոնք հավաստագրված են Հյուսիսային Ամերիկայի հավաստագրված էներգիայի մասնագետների խորհրդի (NABCEP) կողմից, որը բարձր ստանդարտ է արդյունաբերության մեջ:

Ստացե՛ք առաջարկներ առնվազն 3 լիցենզավորված արևային էներգիայի մատակարարներից, համեմատե՛ք առաջարկները և նրանց հարցեր տվե՛ք

Արևային էներգիայի մատակարարների ցանկը կրճատելուց հետո խնդրե՛ք գնային առաջարկ:

- Տեսե՛ք, թե ինչպես կարելի է համեմատել արևային էներգիայի առցանց գնանշումները և համեմատե՛ք ձեր ստացած գնառաջարկները:
- Նկատի՛ ունեցեք, որ ամենաէժան առաջարկը պարտադիր չէ, որ լավագույն տարբերակը լինի ձեզ համար: Շատ ցածր առաջարկը կարող է նշանակել, որ արևային էներգիայի մատակարարը փորձում է խնայել որակի հաշվին:

CPUC-ն արևային էներգիայի մատակարարներին առաջարկում է սույն ուղեցույցը տրամադրել իրենց պոտենցիալ հաճախորդների հետ առաջին շփման ընթացքում: Մի հապաղե՛ք արևային էներգիայի մատակարարներին նախօրոք շատ հարցեր տալ: Լիցենզավորված ընկերությունը սիրով կպատասխանի բոլորին: Հարցերի օրինակելի ացանկը հաջորդ էջում է:

Հարցեր արևային էներգիայի մատակարարին տալու համար

Նախքան պայմանագիր ստորագրելը

Ընկերության նախապատմությունը

Ո՞րն է ձեր ընկերության կապալառուի լիցենզիայի համարը՝ տրված Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդի (CSLB) կողմից: Ո՞րն է ձեր տեղադրողի կապալառուի լիցենզիայի համարը:

Արդյո՞ք վաճառողը ձեր ընկերության աշխատակիցն է:

Կնքելու՞ եք ենթակապալի պայմանագիր այլ ընկերության հետ արևային էներգիայի համակարգի տեղադրման համար: Եթե այո, ո՞րն է նրանց CSLB կապալառուի լիցենզիայի համարը:

Որքա՞ն ժամանակ է բիզնեսում եք և քանի՞ համակարգ եք տեղադրել:

Կարո՞ղ եք ինձ տրամադրել երեք հաճախորդների տվյալներ՝ զանգահարելու կամ այցելելու համար: Այս հաճախորդները պետք է ունենան առնվազն մեկ տարի առաջ տեղադրված արևային էներգիայի համակարգ:

Նախագիծ և տանիք

Արդյո՞ք իմ տանիքը հարմար է արևային էներգիայի համար: Ինչո՞ւ:

Արդյո՞ք իմ տանիքը պետք է փոխվի արևային էներգիայի վահանակներ տեղադրելուց առաջ:

- Եթե այո, ապա որքա՞ն դա կարժենա, ո՞վ է դա կատարելու, ո՞րն է նրանց լիցենզիայի համարը, և կա՞ տանիքի երաշխիք:

Ինչու՞ եք ընտրել հենց այս դիզայնը և չափսը արևային էներգիայի համակարգի համար, որն էլ ինձ խորհուրդ եք տվել:

- Նկատի ունեցեք, որ ձեր էլեկտրաէներգիայի բոլոր կարիքները հոգալու համար նախատեսված համակարգն անպայմանորեն լավագույն ներդրումը չէ: Սովորաբար, համակարգը նախատեսվում է նախորդ տարվա ձեր էլեկտրաէներգիայի օգտագործման շուրջ 80-85 տոկոսի չափով:

Ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու, որպեսզի իմ տանիքը չարտահոսի:

Մոտավորապես որքա՞ն կարժենա վահանակները հեռացնելն ու նորից տեղադրելը, եթե ապագայում տանիքս փոխելու կարիք լինի, ներառյալ տուգման վճարները:

Արևային էներգիայի համակարգի արդյունավետությունը և երաշխիքները

Կա՞ն երաշխիքներ վահանակների և ինվերտորների համար:

- Եթե այո, ապա ինչքա՞ն ժամանակ են դրանք աշխատում, և ո՞ւմ հետ կապվեմ այս մասերը փոխարինելու համար:
- Եթե երաշխիքային ժամկետից հետո այնպիսի սարքավորումը, ինչպիսին է ինվերտերը, խափանվում է, որքա՞ն կարժենա դրա փոխարինումը:

Կա՞ն երաշխիքներ աշխատանքի/շինարարության համար:

Արդյո՞ք վերանորոգումը և սպասարկումը ներառված են պայմանագրում: Եթե այո, ապա ո՞ւմ հետ պետք է կապվեմ վերանորոգման համար:

Կկարողանա՞մ վերահսկել համակարգի աշխատանքը, երբ այն տեղադրվի: Եթե այո, ապա ինչպե՞ս:

Արդյո՞ք արևային էներգիայի մատակարարն առաջարկում է էներգիայի նվազագույն երաշխիք (ինչը բնորոշ է վարձակալության և էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերին):

- Եթե այո, ապա ինչպե՞ս կփոխհատուցվեմ, եթե համակարգը չի արտադրում այնքան էներգիա, որքան խոստացվել է պայմանագրով:

Արդյո՞ք կա ապահովագրական քաղաքականություն, որը տրամադրվում է արևային էներգիայի համակարգի հետ, թե՞ ես պետք է լրացուցիչ տանտիրոջ ապահովագրություն վերցնեմ: Նկատի ունեցեք, որ սա հատկապես կարևոր է, եթե դուք ապրում եք հրդեհավտանգ վայրերում:

Ի՞նչ պարտավորություններ ունեմ պայմանագրով, եթե իմ արևային էներգիայի համակարգը դադարի աշխատել այնպիսի աղետի պատճառով, ինչպիսին երկրաշարժն է կամ հրդեհը:

Ո՞վ իրավունք ունի հավակնել իմ արևային էներգիայի համակարգի կողմից արտադրվող էներգիայի բնապահպանական օգուտներին: (Տե՛ս «Կանաչին անցնելու համար բնապահպանական վարկ ստանալը» էջ 18-ում):

Էլեկտրաէներգիայի վարձի խնայողությունների կանխատեսում (տե՛ս էջ 17)

Խնդրում ենք զգուշանալ արևային էներգիայի մատակարարից, ով ձեզ ասում է, որ արևային էներգիան անվճար է. դա այդպես չէ:

Կեղծ պնդումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս էջ 2:

Կբացատրե՞ք ինձ, թե ինչու Էլեկտրաէներգիայի վարձի խնայողության կանխատեսումը երաշխիք չէ:

Էլեկտրաէներգիայի մատակարարի հաշվի աճի ի՞նչ գործակից է ենթադրվում ձեր Էլեկտրաէներգիայի վարձի խնայողությունների գնահատման մեջ:

- Նկատի ունեցեք, որ CPUC-ն սահմանափակել է աճի գործակիցի ենթադրությունը տարեկան 4 տոկոսով:

Թեև ես կշարունակեմ վճարել Էլեկտրաէներգիայի վճարները արևային էներգիայից օգտվելուց հետո, ես կարող եմ ստանալ արևային էներգիայի վճարի կրեդիտներ իմ Էլեկտրաէներգիայի հաշվին: Ինչպե՞ս է դա աշխատում:

Կա՞ արդյոք հնարավորություն ամսական կտրվածքով վճարելու իմ Էլեկտրաէներգիայի հաշիվները, այլ ոչ թե տարեկան, որպեսզի ծախսերն ավելի հավասար լինեն տարվա ընթացքում: Ինչպե՞ս կարող եմ գրանցվել:

Էլեկտրաէներգիայի ո՞ր սակագնային պլանին եք խորհուրդ տալիս անցնել արևային էներգիայի համար և ինչո՞ւ:

- Որքա՞ն ժամանակ ես կլինեմ այդ սակագնային պլանում, և ինչպե՞ս կարող եմ համեմատել կամ փոխել սակագների պլանները իմ Էլեկտրաէներգիայի մատակարարի կայքում:
- Նկատի ունեցեք, որ Էլեկտրաէներգիայի յուրաքանչյուր մատակարար իր կայքում ունի սակագնային պլանի համեմատության գործիք կամ էջ:

Արդյո՞ք իմ Էլեկտրաէներգիայի մատակարարը հատուկ սակագներ է առաջարկում արևային էներգիայի բաժանորդների համար:

Ազդեցություններ ապագայում ձեր տան վաճառքի վրա

Արդյո՞ք արևային էներգիայի համակարգը կդժվարացնի իմ տան վաճառքը կամ վերաֆինանսավորումը:

Վարձակալության, էներգիայի գնման պայմանագրերի (PPA) և PACE ֆինանսավորվող համակարգերի համար.

- Ի՞նչ է պատահում, եթե տան գնորդը չի ցանկանում արևային էներգիային համակարգը կամ չի համապատասխանում վարձակալության, PPA կամ PACE ֆինանսավորվող համակարգին:
- Կա՞ն վճարներ, եթե ես վաղաժամկետ խզեմ պայմանագիրը՝ իմ տունը վաճառելու համար:
- Կա՞ն վճարներ վարձակալությունը, PPA կամ PACE ֆինանսավորումը նոր տանտիրոջը փոխանցելու համար:

Ժամանակացույց (տե՛ս էջ 8)

Ե՞րբ եք առաջարկում սկսել և ավարտել իմ տանիքի վրա արևային էներգիայի տեղադրումը:

Տեղադրումն ավարտվելուց հետո մոտավորապես որքա՞ն ժամանակ կպահանջվի, որպեսզի իմ Էլեկտրաէներգիայի մատակարարը գրավոր հաստատում ուղարկի իմ համակարգը միացնելու համար:

Ի՞նչ իրավիճակներում կկարողանամ ազատվել պայմանագրից:

Ֆինանսավորման մասին հարցերի համար կարդացե՛ք հաջորդ բաժինը:

ՔԱՅԼ 4.Համեմատե՛ք ձեր ֆինանսավորման տարբերակները

Արևային էներգիայի համար ֆինանսավորման ամենատարածված տարբերակներն են.

- Արևային էներգիայի համակարգի ձեռքբերում արևային էներգիայի վարկով կամ կանխիկ գումարով: Գնելու դեպքում դուք դառնում եք համակարգի տերը:
- Գույքի գնահատմամբ մաքուր էներգիայի (PACE) ֆինանսավորում արևային էներգիայի համակարգի նախնական ծախսերի համար, որը դուք հետ եք վճարում Ձեր գույքահարկի հաշվում: PACE ֆինանսավորմամբ դուք դառնում եք համակարգի տերը:
- Արևային էներգիայի համակարգի վարձակալություն, որի դեպքում արևային էներգիայի մատակարարը հանդիսանում է համակարգի սեփականատերը և այն «վարձով տալիս է» ձեզ՝ նախատեսված ամսական վճարով որոշակի տարիների ընթացքում:
- Էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (PPA), որոնցում արևային էներգիայի մատակարարին պատկանում է արևային էներգիայի համակարգը, և վերջինս վաճառում է ձեզ իր արտադրած էլեկտրաէներգիան որոշակի գնով որոշակի տարիների ընթացքում:

Հաջորդ մի քանի էջերը պարունակում են համառոտ ակնարկ յուրաքանչյուր տարբերակի առավելությունների և թերությունների վերաբերյալ, և ապա դրանց ավելի մանրամասն դիտարկում:

	Առավելություններ	Թերություններ
Կանխիկով կամ վարկով ձեռքբերում	Սովորաբար, ներդրումների ավելի մեծ վերադարձ: Եթե դուք վարկ եք օգտագործում, կանխավճարները քիչ են կամ ընդհանրապես բացակայում են: Կարող է աճել տան արժեքը: Դուք կարող եք ուղղակիորեն ստանալ հարկային արտոնություններ և գնիջեցումներ: Խորհրդակցե՛ք հարկային մասնագետի հետ՝ տեսնելու՝ արդյոք դուք համապատասխանում եք:	Դուք սովորաբար պատասխանատու եք վերանորոգման և սպասարկման համար: Սա կարող է հանգեցնել տարբեր արտադրողներին դիմելուն, ովքեր կարող են դուրս գալ բիզնեսից բաղկացուցիչների 10-20 տարվա կյանքի ցիկլի ընթացքում: Որոշ արևային էներգիայի վարկեր կալանք են դնում ձեր գույքի վրա: Այդ դեպքերում, եթե դուք չկատարեք ձեր վճարումները, դա կարող է հանգեցնել բռնագրավման կամ ավելի դժվարացնել ձեր տան վաճառքը կամ ձեր հիփոթեքի վերաֆինանսավորումը:
PACE ֆինանսավորում	Քիչ կամ առանց նախնական ծախսերի: Կարող է ունենալ ավելի երկար մարման ժամկետ, քան սովորական տան բարեկարգման վարկը, որը կարող է նախընտրելի լինել: Դուք կարող եք ուղղակիորեն ստանալ հարկային արտոնություններ և գնիջեցումներ: Խորհրդակցե՛ք հարկային մասնագետի հետ՝ տեսնելու՝ արդյոք դուք համապատասխանում եք:	PACE ֆինանսավորումը հանգեցնում է ձեր գույքի վրա առաջնահերթ կալանք դնելուն: Ձեր բանկը կարող է պահանջել, որ դուք վճարեք PACE-ի գնահատումը մինչև վերաֆինանսավորումը: Եթե դուք չկատարեք ձեր PACE վճարումները, դա կարող է հանգեցնել բռնագանձման կամ ավելի դժվարացնել ձեր տան վաճառքը կամ ձեր հիփոթեքի վերաֆինանսավուրումը: Դուք սովորաբար պատասխանատու եք վերանորոգման և սպասարկման համար: Սա կարող է հանգեցնել տարբեր արտադրողներին դիմելուն, ովքեր կարող են դուրս գալ բիզնեսից բաղկացուցիչների 10-20 տարվա կյանքի ցիկլի ընթացքում:
Վարձակալություն և PPA	Քիչ կամ առանց նախնական ծախսերի: Արևային էներգիայի մատակարարը պատասխանատու է բոլոր մոնիտորինգների, տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար: Նվազագույն էներգիայի արտադրությունը հաճախ երաշխավորված է:	Տան վաճառքը կարող է լինել շատ ավելի բարդ, քան ձեռք բերված համակարգով: Տարբերակները սովորաբար հետևյալն են. նոր սեփականատերը պետք է համաձայնի ստանձնել վարձակալությունը/համաձայնագիրը, դուք շարունակում եք վճարումներ կատարել, կամ դուք գնում եք վարձակալությունը/համաձայնագիրը, որը կարող է լինել հազարավոր դոլարներ: Արևային էներգիայի մատակարարը կարող է դադարեցնել իր բիզնեսը պայմանագրի ժամկետի ընթացքում:

Ուղիղ գնումների ավելի մանրամասն դիտարկում (կանխիկ կամ վարկով)

Դուք կարող եք ձեռք բերել արևային էներգիայի համակարգ արևային էներգիայի մատակարարից կամ արտադրողից ավանդական վարկով, արևային էներգիայի վարկով կամ կանխիկ գումարով: Այս մոտեցմամբ դուք դառնում եք տեղադրված համակարգի տերը: Վարկերի տեսակները ներառում են.

- Գրավադրումով վարկեր. դրանք պահանջում են ակտիվ, որը կծառայի որպես վարկի գրավ. հաճախ այդ ակտիվը ձեր արևային էներգիայի համակարգն է:
- Անգրավ վարկեր. դրանք չեն պահանջում որևէ գրավ՝ կրեդիտ քարտի պես:

Գրավադրումով վարկը հաճախ նախընտրելի է, քանի որ այն սովորաբար ունի ավելի ցածր տոկոսադրույքներ:

Արևային էներգիայի շատ մատակարարներ աշխատում են վարկատուների հետ, որոնք առաջարկում են արևային էներգիայի վարկեր, բայց դուք պետք է ստուգեք նաև բանկերը և վարկային ընկերությունները: Համեմատեք առաջարկները՝ համոզվելու համար, որ ձեզ առաջարկվում է ողջամիտ տոկոսադրույք:

Եթե դուք տեղադրեք արևային էներգիայի համակարգը և դրա սեփականատերը դառնաք մինչև 2022 թվականի վերջը, Ձեզ կտրամադրվի 26 տոկոս դաշնային եկամտահարկի զեղչ (ITC): Գործող օրենսդրության համաձայն՝ նախատեսվում է 2023 թվականին տեղադրված համակարգերի համար դաշնային ITC-ն նվազեցնել մինչև 22 տոկոս, իսկ այնուհետև՝ մինչև 0 տոկոս 2023 թվականից հետո տեղադրված համակարգերի համար: Եթե դուք ունեք հարցեր ITC-ի կամ այն մասին, թե արդյոք վարկը ենթակա է հարկի նվազեցման, խնդրում ենք դիմել Արտոնագրված պետական հաշվապահին (CPA) հարկային խորհրդատվության համար:

Եթե դուք ձեռք չեք բերել սպասարկման պլան, կամ ձեր համակարգը չի մատակարարվում դրա հետ, դուք պետք է պատասխանատվություն կրեք ցանկացած սպասարկման և վերանորոգման համար: Համոզվեք, որ պահում եք սարքավորումների երաշխիքները, հատկապես ինվերտորինը, որը կարող է փոխարինվել ավելի շուտ, քան մյուս սարքավորումները: Եթե դուք ցանկանում եք վաճառել ձեր տունը, փնտրեք փորձառու անշարժ գույքի գործակալներ և գնահատողներ, ովքեր ունեն արևային էներգիայով տներ վաճառելու փորձ: Դուք կարող եք համակարգը ներառել տան վաճառքի մեջ, ինչպես ցանկացած այլ տան խոշոր բարեկարգում:

Հարցեր, որոնք պետք է տալ վարկատուին վարկով արևային էներգիայի համակարգի գնման վերաբերյալ.

Որքա՞ն է վարկի ընդհանուր արժեքը պայմանագրի ողջ ընթացքում:

Որքա՞ն պետք է վճարեմ նախապես, որքա՞ն ժամանակի ընթացքում և ինչքա՞ն ժամանակով:

Որքա՞ն է իմ տոկոսադրույքը:

Որքա՞ն է իմ տարեկան տոկոսադրույքը («APR»):

Ո՞ւմ կարող եմ դիմել, եթե ես հարցեր ունենամ վարկի վճարումների վերաբերյալ:

Արդյո՞ք արևային էներգիայի վարկը կդժվարացնի իմ տան վաճառքը կամ վերաֆինանսավորումը:

Արդյո՞ք ես պետք է գնեմ իմ վարկը: Ո՞ւմ հետ կապվեմ:

PACE-ի ավելի մանրամասն դիտարկում
(Գույքի գնահատմամբ մաքուր էներգիա)

PACE-ը ֆինանսավորման տարբերակ է, որը հասանելի է Կալիֆոռնիայի որոշ շրջաններում: Շատ վայրերում այն վաճառվում է PACE փաստաբանների և փաստաբանական գործակալների միջոցով, որոնցից պահանջվում է գրանցվել PACE ծրագրի ադմինիստրատորի մոտ: PACE ֆինանսավորման պայմանավորվածության մեջ PACE ծրագրի ադմինիստրատորը ֆինանսավորում է արևային համակարգի նախնական ծախսերը, որոնք դուք այնուհետև վճարում եք ձեր գույքահարկի հաշվում գնահատման միջոցով: PACE-ի ֆինանսավորմամբ դուք դառնում եք արևային էներգիայի համակարգի տերը: Դուք պետք է ուշադիր կարդաք և ծանոթանաք պայմաններին և, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցեք հարկային մասնագետի կամ փաստաբանի հետ:

PACE ֆինանսավորումը տրամադրվում է ֆիքսված ժամկետով, սովորաբար մոտ 10-30 տարի, և այն կցվում է ձեր տանը: Եթե դուք վաճառում եք ձեր տունը, նախքան PACE-ի գնահատումը ամբողջությամբ վճարելը, գնորդը կարող է պահանջել, որ դուք վճարեք մնացած գնահատման գումարը, որը կարող է լինել հազարավոր դոլարներ: Որոշ հիփոթեքային վարկատուներ գումար չեն տրամադրի գնորդներին PACE-ի արգելանքով գույք ձեռք բերելու համար, քանի դեռ ամբողջական գնահատումը չի վճարվել:

Ի տարբերություն վարձակալության և էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի, որոնք պահանջում են ամսական վճարումներ, PACE-ի հաշվարկները սովորաբար վճարվում են տարեկան մեկ կամ երկու անգամ մեծ միանվագ գումարներով, գույքահարկի հետ միասին: Հաշվի առնելով այս յուրահատուկ պայմանավորվածությունը՝ կարևոր է հասկանալ, թե որքան և երբ եք պարտք, որպեսզի կարողանաք ամբողջ տարվա ընթացքում բավականաչափ գումար հատկացնել գումարը փակելու համար:

Եթե ձեր տունը գրավադրված է, և դուք սովորաբար վճարում եք ձեր հարկերը՝ օգտագործելով Էսքրոու հաշիվ, ձեր հիփոթեքային ընկերությունը կարող է մեծացնել գումարը, որը դուք վճարում եք ամսական, որպեսզի ծածկի ձեր գույքահարկի ակնկալվող աճը: Քննարկե՛ք, թե PACE-ն ինչպես կազդի ձեր ամսական հիփոթեքի վճարման վրա, նախքան համաձայնագիր ստորագրելը:

Նկատի ունեցեք, որ եթե չկարողանաք կատարել PACE վճարումները՝ ներառված ձեր գույքահարկի կամ հիփոթեքի հետ, ձեր տունը կարող է բռնագանձվել:

Հարցեր PACE ծրագրի ադմինիստրատորին PACE ֆինանսավորվող համակարգի մասին.

Ո՞րն է ձեր PACE ծրագրի ադմինիստրատորի լիցենզիայի համարը:

(Ստուգե՛ք լիցենզիան dfpi.ca.gov/pace-program-administrators կայքում)

Արդյո՞ք PACE փաստաբանը կամ PACE փաստաբանի գործակալը, ում հետ ես խոսել եմ, գրանցված է ձեզ մոտ: (Ստուգե՛ք նրանց գրանցումը PACE ծրագրի ադմինիստրատորի մոտ dfpi.ca.gov/pace-program-administrators հղումով)

Որքա՞ն է ֆինանսավորման ընդհանուր արժեքը պայմանագրի ողջ ընթացքում:

Որքա՞ն եմ ես պարտք լինելու PACE ֆինանսավորման համար, երբ վճարեմ իմ հիփոթեքը կամ գույքահարկը:

Տարին քանի՞ անգամ եմ ես կատարելու PACE վճարումը:

Ի՞նչ կլինի, եթե ես ուզում եմ վաճառել կամ վերաֆինանսավորել իմ տունը: Արդյո՞ք PACE ֆինանսավորմամբ ավելի դժվար կլինի վաճառքը կամ վերաֆինանսավորումը: Կա՞ ինչ-որ բան, որ ես պետք է կատարեմ հիփոթեքային ընկերության հետ:

Ի՞նչ տույժեր են նախատեսված գնահատման վճարումը ժամանակին չկատարելու համար:

Ո՞ւմ կարող եմ դիմել, եթե խնդիրներ առաջանան PACE վճարումներ կատարելիս:

Վաճառքի և PPA-ի ավելի մանրամասն դիտարկում
(Էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր)

Վարձակալության դեպքում արևային էներգիայի մատակարարը հանդիսանում է ձեր սեփականության վրա գտնվող համակարգի սեփականատերը և այն «վարձով տալիս է» ձեզ որոշակի ժամկետով: Արևային էներգիայի մատակարարը կտեղադրի արևային էներգիայի համակարգը ձեր տանը, և դուք կկատարեք պլանավորված ամսական վճարումներ՝ համակարգի արտադրած ողջ էլեկտրաէներգիայի դիմաց: Սովորաբար վարձակալության պայմանագրի ժամկետը 20-25 տարի է:

Էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA) ձեր սեփականության վրայի համակարգը պատկանում է արևային էներգիայի մատակարարին, և վերջինս վաճառում է ձեզ իր արտադրած էլեկտրաէներգիան: PPA-ները նման են վարձակալության պայմանագրերին, բացառությամբ այն բանի, որ համակարգի համար հաստատագրված ամսական վճարի փոխարեն դուք սովորաբար վճարում եք արևային էներգիայի համակարգի կողմից արտադրվող ամբողջ հզորության համար (կիլովատտ-ժամի համար ֆիքսված սակագնով): Պայմանագրում նշվելու է կիլովատտ/ժամի սակագինը, որը դուք կվճարեք առաջին տարում և դրանից հետո ամեն տարի: Այս սակագինը, ընդհանուր առմամբ, պետք է ավելի ցածր լինի, քան ձեր ընթացիկ էլեկտրաէներգիայի սակագինը: Սովորաբար PPA պայմանագրի ժամկետը 20-25 տարի է:

- Եթե դուք վաճառում եք ձեր տունը մինչև վարձակալության կամ PPA պայմանագրի ավարտը, դուք ստիպված կլինեք վճարել արևային էներգիայի մատակարարին վարձակալության կամ PPA-ի արժեքի մնացորդը կամ փոխանցել պայմանագիրը գույքի նոր սեփականատիրոջը: Համոզվե՛ք, որ հասկանում եք պայմանագրի կոնկրետ պայմանները, քանի որ վարձակալությունը կամ PPA-ի ետ գնումը կարող է արժենալ հազարավոր դոլարներ:
- Վարձակալությունների կամ PPA-ների վճարումները, որպես կանոն, ամեն տարի ավելանում են որոշակի գումարով՝ «էսկալացիայի դրույթների» կամ «էսկալատորի» հիման վրա: Էսկալատորները սովորաբար գտնվում են 1 տոկոսից 3 տոկոս աճի միջակայքում՝ նախորդ տարվա ձեր վճարած սակագնի համեմատ: Զգու՛յշ եղեք դրանից բարձր էսկալատորով պայմանագիր կնքելուց:
- Վարձակալության և PPA-ների կազմակերպման տարբեր եղանակներ կարող են լինել, օրինակ՝ նախապես ավելի շատ վճարել ձեր ամսական վճարումները նվազեցնելու համար:

Վարձակալության կամ PPA-ի մասին վարկատուին կամ արևային էներգիայի մատակարարին տալու հարցեր

Որքա՞ն է արևային էներգիայի համակարգի կամ արևային էներգիայի ընդհանուր արժեքը պայմանագրի ողջ ընթացքում:

Որքա՞ն պետք է վճարեմ նախապես, որքա՞ն ժամանակի ընթացքում և ինչքա՞ն ժամանակով:

Արդյո՞ք իմ վճարումները կավելանան ժամանակի ընթացքում: Որքանո՞վ են դրանք ավելանալու և որքա՞ն հաճախ:

Կա՞ կանխավճար կատարելու տարբերակ՝ իմ ամսական վճարումները (վարձակալության համար) կամ կիլովատտ/ժամ դասակագինը (PPA-ի համար) նվազեցնելու համար:

Ի՞նչ կլինի, եթե ես ցանկանամ վաղաժամ դադարեցնել վարձակալությունը կամ PPA-ն:

Եթե ես վաղաժամ դադարեցնեմ իմ պայմանագիրը, արդյո՞ք ես պետք է մեծ միանվագ վճարում կատարեմ և/կամ վաղաժամ դադարեցման վճար տամ: Եթե այո, ապա որքա՞ն պարտք կլինեմ:

Արդյո՞ք վարձակալությունը կամ PPA-ն կդժվարացնեն իմ տան վաճառքը կամ վերաֆինանսավորումը:

Ո՞վ է պատասխանատու Արևային էներգիայի համակարգի մոնիտորինգի, շահագործման և պահպանման համար:

ՔԱՅԼ 5. Տեղեկանալ էլեկտրաէներգիայի վարձի խնայողության մասին

Էլեկտրաէներգիայի վարձերի խնայողության գնահատումը չի երաշխավորում խնայողությունը

Էլեկտրաէներգիայի վարձի խնայողությունների գնահատականները հիմնավորված ենթադրություններ են այն մասին, թե որքան կարող եք խնայել տանիքային արևային էներգիայի միջոցով: Դրանք հիմնված են մի քանի անորոշ գործոնների վրա: Ահա մի քանի պատճառ, թե ինչու կարող են ձեր խնայողությունները ավելի ցածր լինել, քան ենթադրվում էր.

Հետագայում ձեր էներգիայի օգտագործումը անորոշ է: Օրինակ, եթե ձեր ընտանիքը աճի, դուք գնեք էլեկտրոմոբիլ կամ որոշեք ամռանը միացնել ձեր օդորակիչը, ձեր էներգիայի սպառումը կմեծանա:

Էլեկտրաէներգիայի գներն ու սակագները կարող են փոխվել ժամանակի ընթացքում: Էլեկտրաէներգիայի հաշիվներում խնայողությունների գնահատականները սովորաբար ենթադրում են, որ դրանք ամեն տարի կավելանան որոշակի տոկոսով (CPUC-ն սահմանափակել է աճի գործակիցի ենթադրությունը տարեկան 4 տոկոսով այդ գնահատականների համար): Բացի այդ, ձեր էլեկտրաէներգիայի մատակարարը կարող է ձեզանից պահանջել ապագայում անցնել այլ սակագնային պլանի, որը կարող է փոխել ձեր խնայողությունների չափը:

Ձեր արևային էներգիայի համակարգը կարող է մի փոքր ավելի վատ աշխատել, քան ենթադրվում էր: Օրինակ, եթե ձեր տարածքն անսովոր փոշոտ է, համակարգը կարող է մի փոքր ավելի քիչ էներգիա արտադրել, քան նախատեսված էր:

Եթե դուք վաճառում եք ձեր տունը, կարող եք լրացուցիչ ծախսեր կրել: Օրինակ, եթե գնորդը չի ցանկանում վերցնել վարձակալությունը կամ PPA-ն, ապա դուք պետք է ետ գնեք պայմանագիրը, ինչը կարող է հազարավոր դոլարներ արժենալ:

Նախքան պայմանագիր ստորագրելը, հարցրեք ինքներդ ձեզ.

եթե խնայողությունները ի վերջո ավելի ցածր լինեն, քան կանխատեսված ամսական կամ տարեկան խնայողությունները, արդյո՞ք տանիքում արևային էներգիա ստանալը դեռևս իմաստ ունի ինձ համար:

Ինչպե՞ս են գործում էլեկտրաէներգիայի վարձերի խնայողությունները

Եթե դուք անցնում եք արևային էներգիայի, ձեր էլեկտրաէներգիայի մատակարարը ձեզ կգրանցի իր Մաքուր էներգիայի հաշվարկ (NEM) ծրագրում: NEM-ը թույլ է տալիս ֆինանսական վարկ ստանալ ձեր էլեկտրաէներգիայի հաշվին, երբ ձեր արևային էներգիայի համակարգը էլեկտրաէներգիան հետ է ուղարկում ցանց՝ ձեր տան էլեկտրաէներգիայի կարիքները նախապես սնուցելուց հետո: Սովորաբար այս վարկը մոտավորապես հավասար է էներգիայի մանրածախ սակագնին: Սա նշանակում է, որ ձեր հաշվի վրա մուտքագրվում է մոտավորապես նույն գումարը, որը ձեր էլեկտրաէներգիայի մատակարարը ձեզնից կգանձեր էլեկտրաէներգիայի համար այդ ընթացքում:

NEM-ը և ձեր էլեկտրաէներգիայի հաշիվը

Էլեկտրաէներգիայի սպառում և արտահանում

Քանի որ արևը միշտ չէ, որ շողում է, արևային էներգիայի բաժանորդները ևս ապավինում են իրենց էլեկտրաէներգիայի մատակարարի էլեկտրաէներգիայի վրա: Ձեր արևային էներգիայի համակարգը ցանցին միանալուց հետո ձեր էլեկտրաէներգիայի ամսական հաշիվը կամփոփի, թե որքան էլեկտրաէներգիա եք վերցրել կամ «սպառել» ձեր էլեկտրաէներգիայի մատակարարից, և որքան էլեկտրաէներգիա է ձեր արևային էներգիայի համակարգը ուղարկել ցանց կամ «արտահանել»:

Ամսական վճարումներ, կրեդիտներ և նվազագույն գումարներ

Եթե դուք ավելին շատ եք սպառել, քան ուղարկել եք ցանցին տվյալ ամսվա ընթացքում, ապա ձեր հաշվի վրա կտեսնեք ընդհանուր գանձում: Եթե դուք ավելի շատ եք ուղարկել, քան վերցրել եք, ապա կտեսնեք ընդհանուր կրեդիտի չափը: Որպես կանոն, դուք կարող եք տեղափոխել կրեդիտները հաջորդ ամսվահաշիվ, իսկ էլեկտրաէներգիայի օգտագործման վճարը վճարման ենթակա չի լինի մինչև 12-ամսյա ժամանակահատվածի ավարտը: Նկատի ունեցեք, որ էլեկտրաէներգիայի մատակարարներից շատերը արևային էներգիայի սպառողներից պահանջում են ամեն ամիս վճարել ամսական նվազագույն գումար, ինչպես մյուս բաժանորդները: Այս նվազագույն գումարը կարող է փոխվել ժամանակի ընթացքում:

Ըստ օգտագործման ժամանակի սակագներ

PG&E, SCE և SDG&E ընկերությունների արևային էներգիայի հաճախորդներից պահանջվում է օգտագործել Ըստ օգտագործման ժամանակի (TOU) սակագնային պլանը: TOU սակագնային պլանը կգանձի տարբեր գներ էլեկտրաէներգիայի համար՝ կախված օրվա ժամից: Գները սովորաբար ավելի բարձր են ժամը 16:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, որոնք կոչվում են «ծանրաբեռնված» ժամեր, իսկ օրվա մնացած ժամերին և գիշերը՝ «չծանրաբեռնված» ժամերին, ցածր են:

12 ամսվա հաշվարկային հաշիվ

Սովորաբար, 12-ամսյա ժամկետի վերջում դուք կստանաք հաշվարկային հաշիվ, որը նաև կոչվում է «ճշգրտող» հաշիվ, որը մարում է բոլոր կրեդիտները ու գանձումները: Թեև արևային էներգիայի օգտագործմանն անցնելը կարող է նվազեցնել ձեր էլեկտրաէներգիայի ծախսերը, հաճախորդների մեծ մասն այնուամենայնիվ 12 ամսվա վերջում որոշակի գումար են պարտք մնում իրենց էլեկտրաէներգիայի մատակարարին: Տե՛ս ստորև ներկայացված գրաֆիկը, որը ցույց է տալիս արևային էներգիայի բաժանորդի համար 12-ամսյա ցիկլի ընթացքում էլեկտրաէներգիայի հաշիվի նմուշը:

Էլեկտրաէներգիայի որոշ մատակարարներ ձեզ հնարավորություն են տալիս վճարելու ձեր հաշվարկային հաշիվը ոչ թե տարեկան, այլ ամսական: Եթե ընտրեք ամսական տարբերակը, ձեր վճարումները կբաշխվեն ավելի հավասարաչափ 12 ամիսների ընթացքում, և դուք ստիպված չեք լինի անհանգստանալ տարին մեկ անգամ հնարավոր խոշոր գումար վճարելու մասին: Պարզ խոսե՛ք ձեր արևային էներգիայի մատակարարի հետ, եթե դուք ցանկանում եք ամսական տարբերակը, և կրկնակի անգամ ստուգե՛ք ձեր էլեկտրաէներգիայի մատակարարի հետ, որ ճիշտ տարբերակն է ընտրվել:

Թեև հազվադեպ է պատահում, բայց եթե 12 ամսվա ընթացքում ավելի շատ էլեկտրաէներգիա եք ուղարկել, քան ստացել եք, դուք սովորաբար իրավասու եք ստանալու «զուտ ավելցուկի փոխհատուցում», որը կազմում է մոտ 2-ից 3

Հաշվարկային կամ «Ճշգրտող» էլեկտրաէներգիայի հաշվի նմուշ



ցենտ մեկ կիլովատտ/ժամի համար: Քանի որ այս սակագինը ավելի ցածր է, քան մանրածախ սակագինը, սովորաբար ձեր ֆինանսական շահերից չի բխում տեղադրել արևային էներգիայի համակարգ, որն արտադրում է ավելի շատ էներգիա, քան դուք կօգտագործեիք մեկ տարվա ընթացքում:

Ներկայումս PG&E, SCE և SDG&E ընկերությունների հաճախորդներին երաշխավորված է NEM 20 տարվա համար՝ սկսած այն պահից, երբ իրենց արևային էներգիայի համակարգը կսկսի գործել: Այնուամենայնիվ, ձեր էլեկտրաէներգիայի սակագինը ենթակա է փոփոխման: Այցելե՛ք www.cpuc.ca.gov/electricrates՝ էլեկտրաէներգիայի սակագների վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար:

Եթե այս բաժինը կարդալուց հետո դեռ հարցեր ունեք, ապա կարող եք օգնություն գտնել այս ուղեցույցի 20-21 էջերի լրացուցիչ աղբյուրներից:

Կանաչին անցնելու համար բնապահպանական վարկ ստանալ

Երբ բնակելի արևային էներգիայի համակարգը արտադրում է էլեկտրաէներգիա, համակարգը իրավասու է ստանալու Վերականգնվող էներգիայի վկայագրեր (REC): Եթե դուք ձեռք եք բերում ձեր արևային էներգիայի համակարգը, ապա ձեզ են պատկանում ստեղծված ցանկացած REC: Եթե դուք կնքում եք վարձակալության կամ PPA պայմանագիր, հարցրե՛ք ձեր արևային էներգիայի մատակարարին, թե ում են պատկանում REC-ները, և ստուգե՛ք պայմանագրում փոքր տառատեսակով նշված կարևոր տեղեկությունը:

Արևային էներգիայի համակարգերի սեփականատերերը կարող են վաճառել իրենց կողմից ստեղծված REC-ները: Համակարգի սեփականատերերը պետք է համապատասխանեն Արևմտյան վերականգնվող էներգիայի արտադրության տեղեկատվական համակարգին (WREGIS), որը թողարկում և հետևում է REC-ները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք WREGIS ՀՏՀ-ն՝ wecc.org/WREGIS/ հղումով:

Համաադրել արևային էներգիան կուտակիչի հետ

Երբ ձեր արևային էներգիայի համակարգի հետ կուտակիչ մարտկոց եք տեղադրում, դուք կարող եք պահել ձեր վահանակների կողմից արտադրված արևային էներգիայի ավելցուկային էլեկտրաէներգիան երեկոյան օգտագործելու համար, երբ արևը մայր է մտնում: Ծրագիրը, որը տրվում է կուտակիչ մարտկոցի հետ, ավտոմատ կերպով որոշում է՝ կուտակել լրացուցիչ էներգիա, թե արտահանել այն ցանց՝ առավելագույնի հասցնելու ծախսերի խնայողությունը: Կուտակիչ մարտկոցը կարող է նաև ապահովել սահմանափակ պահեստային հզորություն:

Պետության կողմից ֆինանսավորվող Ինքնուրույն արտադրության խրախուսման ծրագիրը (SGIP) տրամադրում է ֆինանսական աջակցություն՝ կուտակիչներ տեղադրելու համար: SGIP-ի մասին լրացուցիչ մանրամասների համար տե՛ս cpuc.ca.gov/sgip:

ՔԱՅԼ 6. Ուշադիր կարդացե՛ք բոլոր փաստաթղթերը

6

Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթուղթ

Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդի այս փաստաթուղթը ձեզ ցույց է տալիս առաջարկվող արևային էներգիայի համակարգի ընդհանուր ծախսերը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ծախսերի կանխատեսվող խնայողությունները՝ օգտագործելով ստանդարտացված տվյալները և ենթադրությունները: Այն նաև տեղեկատվություն է պարունակում Ձեր՝ պայմանագիրը չեղարկելու եռօրյա իրավունքի մասին: Արևային էներգիայի մատակարարը պետք է լրացնի այս փաստաթուղթը: Այն կարող է տեղադրվել՝ որպես պայմանագրի տիտղոսաթերթ: Տե՛ս դատարկ տարբերակը cslb.ca.gov/consumers/solar_smart հղումով:

Պայմանագիր

Ձեր և արևային էներգիայի մատակարարի միջև կնքված արևային էներգիայի պայմանագիրը հանդիսանում է իրավաբանորեն պարտավորեցնող փաստաթուղթ: Համոզվե՛ք, որ այն ուշադիր կարդացել եք:

Համոզվե՛ք, որ այն ամենը, ինչ ձեզ խոստացել են, նշված է պայմանագրում: Օրինակ, այս ուղեցույցի 10-րդ և 11-րդ էջերում տրված հարցերի շատ պատասխաններ պետք է նշված լինեն պայմանագրում:

Օրենքի համաձայն՝ արևային էներգիայի տեղակայման ցանկացած պայմանագիր պետք է ներառի.

- Կապալառուի մասին տեղեկություններ, ներառյալ իրավաբանական հասցեն և լիցենզիաների համարները
- Ծրագրի նկարագրությունը՝ ներառյալ տեղադրված սարքավորումները և օգտագործված նյութերը
- Պայմանագրի գինը՝ գումարած ֆինանսական ծախսերը և/կամ կանխավճարը, եթե կիրառելի է
- Պայմանագրի գործողության սկզբի և ավարտի մոտավոր ամսաթիվը
- Պայմանագիրը չեղարկելու 3-օրյա ժամկետի իրավունքի մասին ծանուցում (սահմանափակ բացառություններով)

Հարցրե՛ք արևային էներգիայի մատակարարին, թե ինչ իրավիճակների դեպքում կարելի է ազատվել պայմանագրից: Օրինակ, եթե ձեր արևային էներգիայի մատակարարը շինհրապարակ այցելության ժամանակ հայտնաբերի, որ ձեր տանիքը ստվերված է այնպես, որ չէր սպասվում, դա կարող է չեղարկել պայմանագիրը:

Ֆինանսական փաստաթղթեր

Եթե դուք համակարգ եք գնում արևային էներգիայի վարկով, ձեզանից կպահանջվի ստորագրել առանձին ֆինանսավորման համաձայնագիր: Վարկատուն ձեզ կտրամադրի այս առանձին պայմանագիրը:

Եթե PACE ֆինանսավորմամբ համակարգ եք ձեռք բերում, դուք պետք է ստորագրեք՝ (1) Ֆինանսավորման Հայտ և (2) Ֆինանսավորման Համաձայնագիր:

- Նախքան ֆինանսավորման հայտը ստորագրելը, ուշադիր կարդացե՛ք այն՝ համոզվելու համար, որ բոլոր տեղեկությունները ճիշտ են՝ ներառյալ ձեր կոնտակտային տվյալները, ձեր եկամուտը և արևային էներգիայի համակարգի արժեքը:
- Առանձին ֆինանսավորման համաձայնագիր կարող է տրամադրվել արևային մատակարարի, PACE ծրագրի ադմինիստրատորի կամ ֆինանսավորող կազմակերպության կողմից: Եթե դուք օգտագործում եք PACE ֆինանսավորումը, այն պետք է ներառի PACE ֆինանսավորման Գնահատման և Բացահայտման ձևը, որը ցույց է տալիս արևային էներգիայի համակարգի ընդհանուր արժեքը: Այս փաստաթղթի դատարկ տարբերակի հղումը հասանելի է www.cslb.ca.gov/consumers/solar_smart կայքում:

Համոզվե՛ք, որ այն ամենը, ինչ ձեզ խոստացել են, գրված է ցանկացած ֆինանսավորման համաձայնագրում: Օրինակ, այս ուղեցույցի 13-ից 15-րդ էջերում տրված հարցերի շատ պատասխաններ պետք է նշված լինեն ֆինանսավորման համաձայնագրում:

ՔԱՅԼ 7. Ստուգե՛ք լրացուցիչ աղբյուրները

Եթե դեռևս հարցեր ունեք արևային էներգիայի օգտագործման որևէ ասպեկտի վերաբերյալ, ստորև բերված ցանկում գտե՛ք ռեսուրսներ, որտեղ կարող եք կարդալ կամ դիտել լրացուցիչ տեղեկություններ, կամ զանգահարե՛ք որևէ մեկին՝ ձեզ խորհուրդ տալու համար:

Էլեկտրաէներգիա մատակարարողի արևային էներգիայի ծրագրեր

Խաղաղօվկիանոսյան գազային և Էլեկտրական ընկերությունը (PG&E)

- PG&E արևային էներգիայի հաճախորդների աջակցության ծառայություն՝ 877-743-4112
- PG&E մաքուր էներգիա. pge.com/en_US/residential/solar-and-vehicles/options/option-overview/how-to-get-started/how-to-get-started.page?

Հարավային Կալիֆոռնիա Էդիսոն (SCE)

- SCE արևային էներգիայի հեռախոսահամար՝ 866-600-6290
- SCE արևային էներգիա տան համար. sce.com/residential/generating-your-own-power/solar-power

Սան Դիեգո Գազ և Էլեկտրաէներգիա (SDG&E)

- SDG&E արևային էներգիայի հեռախոսահամար՝ 800-411-SDGE (7343)
- SDG&E՝ արևային էներգիայի անցնելը. sdge.com/residential/solar/getting-started-with-solar

Եթե էլեկտրաէներգիայի մեկ այլ մատակարար ձեզ էլեկտրաէներգիա է մատակարարում, զանգահարե՛ք նրանց կամ ստուգե՛ք նրանց կայքը՝ նրանց՝ արևային էներգիայի ծրագրերի վերաբերյալ մանրամասների համար:

Արևային էներգիայի ծրագրեր ցածր եկամուտ ունեցողների համար

- SASH և DAC-SASH ծրագիր՝ 866-921-4696 և gridalternatives.org/qualify
- Համայնքային արևային կանաչ սակագնային ծրագիր և DAC Կանաչ սակագնային ծրագիր՝ cpuc.ca.gov/solarindacs

Եթե դուք PG&E, SCE կամ SDG&E հաճախորդ չեք, դիմեք ձեր էլեկտրաէներգիայի մատակարարին՝ ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի տարբերակների համար:

Կապալառուների պետական լիցենզիայի խորհուրդ (CSLB)

- CSLB 24-ժամյա լիցենզավորում և տեղեկատվություն սպառողների համար՝ 800-321-CSLB (2752)
- Ստուգեք կապալառուի լիցենզիան կամ տան բարեկարգման վաճառողի գրանցումը. cslb.ca.gov/onlineservices/checklicenseii/checklicense.aspx
- CSLB խելացի արևային էներգիա՝ cslb.ca.gov/consumers/solar_smart
- PACE ֆինանսավորման գնահատման և բացահայտման ձև և CSLB Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթուղթ՝ cslb.ca.gov/consumers/solar_smart

Ֆինանսական պաշտպանության և նորարարության վարչություն (DFPI)

- PACE ֆինանսավորման մասին տեղեկատվություն՝ dfpi.ca.gov/pace
- Ֆինանսական ծառայություններ՝ 213-576-7690; pacehelp@dfpi.ca.gov
- PACE ծրագրի ադմինիստրատորի լիցենզիայի ստուգում՝ dfpi.ca.gov/pace-program-administrators
- PACE մատակարարի դեմ բողոք ներկայացնելը՝ dfpi.ca.gov/file-a-complaint/

Արևային էներգիայի հաշիվներ և Մաքուր էներգիայի հաշվարկ (NEM)

- PG&E. ինչպես կարդալ ձեր արևային էներգիայի հաշիվը՝ pge.com/en_US/residential/solar-and-vehicles/green-energy-incentives/solar-and-renewable-metering-and-billing/how-to-read-your-bill/how-to-read-your-bill.page
- SCE. հասկանալ Ձեր հաշիվը. sce.com/residential/generating-your-power/net-energy-metering/understanding-your-bill
- SDG&E. հասկանալ Ձեր NEM հայտարարությունը. sdge.com/residential/savings-center/solar-power-renewable-energy/net-energy-metering/billing-information/understanding-your-nem-statement
- CPUC NEM ակնարկ՝ cpuc.ca.gov/nem

Արևային էներգիայի ֆինանսավորման ուղեցույցներ

- Մաքուր էներգիայով նահանգների դաշինքի (CESA) տան սեփականատերի ուղեցույց արևային ֆինանսավորման վերաբերյալ՝ cesa.org/resource-library/resource/a-homeowners-guide-to-solar-financing-leases-loans-and-ppas
- CESA una guía práctica de financiación solar para dueños de casa (en Español): cesa.org/resource-library/resource/una-guia-practica-de-financiacion-solar-para-duenos-de-casa
- CESA/Ջորջ Վաշինգտոնի համալսարանի տանիքային արևային էներգիայի ֆինանսավորում 101՝ cesa.org/projects/sustainable-solar/videos

Այլ արևային էներգիայի ուղեցույցներ

- Արևային էներգիայի արդյունաբերության միության (SEIA) Բնակելի տարածքների սպառողների ուղեցույց արևային էներգիայի վերաբերյալ՝ www.seia.org/research-resources/residential-consumer-guide-solar-power
- Վերականգնվող էներգետիկայի միջպետական խորհուրդ (IREC). արևային էներգիայի խելացի սպառող. ստուգացուցակ՝ irecusa.org/programs/consumer-protection/checklist /
- CESA/Ջորջ Վաշինգտոնի համալսարանը ընտրում է արևային էներգիա տեղադրողին. cesa.org/projects/sustainable-solar/videos

Այս պատկերակով հղումներն ունեն աղբյուր, որը հասանելի է տեսանյութի ձևաչափով:

ՔԱՅԼ 8. «Նախքան ստորագրելը» ստուգաթերթ

Համոզվե՛ք, որ լրացրել եք այս կետերը, նախքան որևէ փաստաթուղթ ստորագրելը:

Հիշեք. մի՛ շտապեք և մի՛ ճնշվեք պայմանագիր ստորագրելուց: Ոչինչ մի՛ ստորագրեք, եթե կարծում եք, որ ձեզ ավելի շատ ժամանակ է պետք ուսումնասիրելու կամ ձեր որոշման մասին մտածելու համար:

- ☐ Ստուգե՛ք՝ արդյոք դուք համապատասխանում եք ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված արևային էներգիայի ծրագրին, որն ունի ուժեղ պաշտպանություն սպառողների համար: Տե՛ս էջ 6:
- ☐ Մտածե՛ք ձեր տունն ավելի էներգաարդյունավետ դարձնելու մասին՝ նախքան արևային էներգիայի անցնելը: Դա կարող է խնայել ձեր գումարը: Տե՛ս էջ 5:
- ☐ Ստացեք առնվազն 3 առաջարկ ձեր տան արևային էներգիայի համար: Տե՛ս էջ 9:
- ☐ Խնդրեք արևային էներգիայի մատակարարից 3 հաճախորդների տվյալներ և զանգահարե՛ք կամ այցելե՛ք նրանց: Տե՛ս էջ 9:
- ☐ Ստուգեք՝ համոզվելու համար, որ արևային էներգիայի մատակարարի լիցենզիան և, եթե կիրառելի է, տան բարեկարգման վաճառողի գրանցման համարը, գործող և վավեր է Կապալառուների պետական լիցենզիայի խորհրդում: Տե՛ս էջ 4:
- ☐ Հասկացե՛ք արևային էներգիայի գնման գործընթացը, ներառյալ այն՝ ինչ է տեղի ունենալու արևային էներգիայի համար պայմանագիր կնքելուց հետո: Տե՛ս էջ 8:
- ☐ Հարցրե՛ք արևային էներգիայի մատակարարին պայմանագրի 4, 10 և 11 էջերի հարցերը, որպեսզի հասկանաք արևային էներգիայի պայմանագրի պայմանները:
- ☐ Եթե դուք ֆինանսավորում եք ձեր համակարգը, տվե՛ք վարկատուին, արևային էներգիայի մատակարարին կամ PACE ծրագրի ադմինիստրատորին 13, 14 կամ 15 էջերի ֆինանսական հարցերը, որպեսզի հասկանաք ձեր ֆինանսավորման պայմանները:
- ☐ Կարդացե՛ք կարևոր տեղեկատվությունը էլեկտրաէներգիայի վարձի խնայողության գնահատումների վերաբերյալ էջ 16-ում և վերանայե՛ք ստանդարտացված մուտքերն ու ենթադրությունները CSLB Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթղթում:
- ☐ Ուշադիր կարդացե՛ք բոլոր այն փաստաթղթերը, որոնք արևային էներգիայի մատակարարը խնդրում է ձեզ ստորագրել: Դրանք սովորաբար ներառում են. 1) Արևային էներգիայի համակարգի տվյալների բացահայտման փաստաթուղթ, 2) Պայմանագիր և 3) Ֆինանսական փաստաթղթեր: Տե՛ս էջ 19:
- ☐ Պահպանեք ձեր ստորագրած բոլոր փաստաթղթերի պատճենները: Այս տեղեկատվությունը օգտակար կլինի, եթե դուք վաճառում եք ձեր տունը, պետք է փոխարինեք տանիքը կամ որևէ խնդիր ունեք վերանորոգման կամ սպասարկման հետ կապված:

ՔԱՅԼ 9. Ստորագրել այս ուղեցույցը

9

2022 թվականի հունվար

Դուք կարդացե՞լ եք այս ուղեցույցի առնվազն առաջին 4 էջերը:

Կալիֆոռնիայի Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցի առաջին 4 էջերը կարևոր տեղեկություններ են պարունակում կեղծ պնդումների, որոնց պետք է ուշադրություն դարձնել, և ձեր իրավունքների մասին:

CPUC-ն խորհուրդ է տալիս արևային մատակարարողներին* տրամադրել այս ուղեցույցը պոտենցիալ հաճախորդների հետ իրենց առաջին շփման ժամանակ, որպեսզի հաճախորդները կարողանան լիովին հասկանալ, թե ինչ է ներառում արևային էներգիայի գնումը: Եթե արևային մատակարարը ձեզ տվել է այս ուղեցույցը ձեր պայմանագրի հետ մեկտեղ, CPUC-ն խորհուրդ է տալիս առնվազն 48 ժամ տրամադրել այս ամբողջ ուղեցույցը կարդալու և հասկանալու համար, նախքան ստորև ստորագրելը:

Մի՛ զգացեք Ձեզ պարտադրված կարդալ ամբողջ փաստաթուղթը, մինչ վաճառողը սպասում է:

Խնդրեք նրանց վերադառնալ ավելի ուշ, որպեսզի դուք ժամանակ ունենաք կարդալ այն:

Հաճախորդ

Խնդրում ենք հաստատել ստորև բերված հայտարարություններից յուրաքանչյուրը՝ նշելով վանդակները: Եթե որևէ պնդում ձեզ չի վերաբերում, ապա այդ պնդման վանդակում գրեք «N/A»:

- ☐ Ես դեռ արևային էներգիայի պայմանագիր չեմ կնքել արևային էներգիայի մատակարարի հետ, որը ստորագրում է 24-րդ էջում:
- ☐ Արևային էներգիայի մատակարարն ինձ տրամադրեց Արևային էներգիայի սպառողների պաշտպանության ուղեցույցի ամբողջական պատճենը՝ իմ անվան սկզբնատառերը և ստորև դրված ստորագրությունը ստանալուց առաջ:
- ☐ Ես կարդացի և իմ անվան սկզբնատառերը նշեցի Կալիֆոռնիայի Արևային էներգիայի սպառողների պաշտպանության ուղեցույցի առաջին 4 էջերում: Արևային էներգիայի մատակարարն ինձ ժամանակ տվեց կարդալու 24 էջանոց ուղեցույցն ամբողջությամբ:
- ☐ Ինձ հնարավորություն տրվեց ստորագրելու Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցը էլեկտրոնային եղանակով կամ ձեռագրով:
- ☐ Արևային էներգիայի մատակարարն ինձ հնարավորություն տվեց կարդալու այս ուղեցույցը Español,中文, 한국어, Tiếng Việt,Tagalog, Հայերեն, Portuguese, կամ Dari լեզուներով, եթե նրանք ինձ հետ խոսում էին այդ լեզուներից մեկով:
- ☐ Եթե ես գործ եմ ունենում դռնից դուռ վաճառողի հետ, արևային էներգիայի մատակարարն առաջարկում է ինձ ստորագրել Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցը՝ ձեռագիր ստորագրությամբ, լռելյայն: Ինձ հնարավորություն է տրվել նաև ստորագրելու էլեկտրոնային տարբերակով:
- ☐ Եթե ես գործ եմ ունենում դռնից դուռ վաճառողի հետ և ուղղակի էլեկտրոնային ձևաչափ չեմ պահանջում, Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցի ամբողջական պատճենը տրամադրվում է թղթային ձևաչափով:
- ☐ Եթե ես ընտրում եմ ստորագրել Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցը էլեկտրոնային եղանակով, ես օգտագործում եմ էլ. փոստի հասցե, որը ստեղծվել և վերահսկվում է իմ կողմից մինչև վաճառքի, վարձակալության կամ էլեկտրաէներգիայի գնման պայմանագիրը:

Ստորագրելով՝ ես հաստատում եմ, որ կարդացել և հասկացել եմ Կալիֆոռնիայի Արևային էներգիայի սպառողների պաշտպանվության ուղեցույցը: Ես նաև հաստատում եմ, որ իմ արևային պայմանագրի, միացման դիմումի, CSLB Արևային էներգիայի մասին տեղեկատվության բացահայտման ձևի և/կամ ֆինանսավորման համաձայնագրի մեջ ներառված տեղեկատվությունը կարող է վերանայվել նահանգային կարգավորիչների կողմից՝ ապահովելու դրանց համապատասխանությունը Կալիֆոռնիայի արևային էներգիայի սպառողների պաշտպանության օրենքներին:

Հաճախորդի տպագիր անունը _____ Ամսաթիվ _____

Հաճախորդի ստորագրություն _____

Շարունակությունը՝ 24-րդ էջում

Արևային էներգիայի մատակարար*

Խնդրում ենք հաստատել ստորև բերված հայտարարություններից յուրաքանչյուրը՝ նշելով վանդակները:

- ☐ Հաճախորդը նշեց իր անվան սկզբնատառերը ուղեցույցի առաջին 4 էջերում:
- ☐ Հաճախորդը ստորագրել է վերոնշյալ տեղում նախքան արևային էներգիայի համակարգի կամ արևային էներգիայի գնման, վարձակալության, կամ PACE ֆինանսավորման պայմանագիր կնքելը ստորև նշված ընկերության հետ:
- ☐ Վաճառքի ներկայացումը այս հաճախորդի համար հիմնականում իրականացվել է այս լեզվով: _____

Ընկերության ներկայացուցչի անունը/պաշտոնը	Ամսաթիվ
Ընկերության ներկայացուցչի ստորագրությունը	Ընկերության հեռախոսահամարը
Ընկերության անվանումը	Ընկերության Էլ.փոստի հասցեն
Ընկերության CSLB լիցենզիայի համարը	Ընկերության CSLB լիցենզիայի դասակարգումը

*Արևային էներգիայի մատակարարը սահմանվում է Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնակատարի թիվ (D.)18-09-044 որոշման մեջ՝ որպես վաճառող, կապալառու, տեղադրող կամ ֆինանսավորող կազմակերպություն, որը էներգիայի գնման, վարձակալման կամ արևային էներգիայի համակարգի գնման պայմանագիր է կնքում: Խաղաղօվկիանոսյան գազային և Էլեկտրական ընկերությունը (PG&E), Հարավային Կալիֆոռնիա Էդիսոնը (SCE), Սան Դիեգո գազ և Էլեկտրաէներգիա (SDG&E) ընկերությունը պահանջում են արևային էներգիայի մատակարարներից ներբեռնել այս էջի ստորագրված պատճենը իրենց միջցանցային պորտալներում, նախքան մասնավոր տների հաճախորդներին էլեկտրական ցանցին միացնելը: Այս պահանջը չի տարածվում նոր տների, բազմաբնակարան շենքերի կամ արևային ջերմային համակարգերի վրա: